ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-612-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում լրացնել նոր՝ 3.1-ին կետ՝

«3.1). լիցենզավորված անձի կողմից օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան խախտումը չվերացնելու դեպքում.»

2. 2-րդ մասում «3-րդ» թվից եւ բառից հետո լրացնել «3.1-րդ» թիվը եւ բառը.

3. 8-րդ մասում «3-րդ» թվից եւ բառից հետո լրացնել «3.1-րդ» թիվը եւ բառը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ին:

(Պ-612-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011/1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի՝
1. 1-ին մասում լրացնել նոր՝ 3.1-ին կետ՝
~~«3.1). լիցենզավորված անձի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 158.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 30-օրվա ընթացքում, համապատասխան խախտումը չվերացնելու դեպքում.»~~

«3.1). լիցենզավորված անձի կողմից օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան խախտումը չվերացնելու դեպքում.»
2. 2-րդ մասում «3-րդ» թվից եւ բառից հետո լրացնել «3.1-րդ» թիվը եւ բառը.
3. 8-րդ մասում «3-րդ» թվից եւ բառից հետո լրացնել «3.1-րդ» թիվը եւ բառը:

~~**Հոդված 2.** Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «3-րդ» թվից եւ բառից հետո լրացնել «3.1.-րդ» թիվը եւ բառը:~~

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~ 2021 թվականի ապրիլի 1-ին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-612-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011/1)
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ(Պ-612[1]-13.05.2020,12.06.2020-ՏՀ-011/1) ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	*ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ*
1.	Կառավարություն, հեղինակներ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. 1-ին մասում լրացնել նոր՝ 3.1-ին կետ՝ «3.1). լիցենզավորված անձի կողմից օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան խախտումը չվերացնելու դեպքում.»:»:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	Կառավարություն, հեղինակներ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի երկրորդ հոդվածը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն, հեղինակներ	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում՝ «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2021 թվականի ապրիլի 1-ին» բառերով: Համապատասխանեցնել հոդվածների համարակալումը փոփոխություններին:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն, հեղինակներ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում՝ «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2021 թվականի ապրիլի 1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է